ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2025 թվականի մայիսի 29-ին

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3.1-ին հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ը1» կետով.

«ը1) կրիպտոակտիվների շուկան և կրիպտոակտիվներով ծառայությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտեր.»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «զ1» կետով.

«զ1) կրիպտոակտիվներ ձեռք բերողների պաշտպանության, կրիպտոակտիվների շուկայում կրիպտոակտիվների արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, կրիպտոակտիվների արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը.»:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը «ապահովագրական» բառից հետո լրացնել «, կրիպտոակտիվների» բառով:

Հոդված 4. Օրենքի 20-րդ հոդվածի «ժէ» կետը «ներդրումային ընկերությունների,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց,» բառերով, իսկ «ներդրումային ընկերությանը,» բառերից հետո՝ «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձին,» բառերով:

Հոդված 5. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասում «գաղտնի համարվող» բառերը փոխարինել «կամ «Կրիպտոակտիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ծառայողական» բառերով:

Հոդված 6. Օրենքի 39.1-ին հոդվածում՝

1) 1-ին մասը «(Երաշխիքային ֆոնդի կառավարման մասով)» բառերից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության տարածքում կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց» բառերով.

2) 5-րդ մասը «ներդրումային ընկերություններում,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց մոտ,» բառերով.

3) 6-րդ մասը՝

ա. «ներդրումային ընկերություններում,» բառերից հետո լրացնել «, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց մոտ,» բառերով,

բ. ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերից հետո լրացնել «կամ «Կրիպտոակտիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով.

4) 7-րդ մասը «ներդրումային ընկերություն,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձ,» բառերով:

Հոդված 7. Օրենքի 39.5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ժե» կետը «ներդրումային ընկերությունների,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց,» բառերով.

2) 6-րդ մասը «ներդրումային ընկերություն,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձ,» բառերի համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 8. Օրենքի 39.10-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդվ Բանկի, ներդրումային ընկերության, կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի, ներդրումային ֆոնդի կառավարչի, ապահովագրական, վերաապահովագ

ած ական ընկերության, բյուրոյի, վարկային կազմակերպության կամ ֆինանսական խ
39.1 մբի և Կենտրոնական բանկի միջև կնքվող պայմանագիրը».
0.

2) 1-ին մասը «ներդրումային ընկերության,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի,» բառերով.
3) 1-ին մասը «ներդրումային ընկերությունների,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց,» բառերով.
4) 2-րդ մասը «ներդրումային ընկերության,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի,» բառերով.
5) 3-րդ մասի «ը» կետը «ներդրումային ընկերության,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի,» բառերով:

Հոդված 9. Օրենքի 39.12-րդ հոդվածում՝
1) 1-ին մասի «ե» կետը «ներդրումային ընկերությունը,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը,» բառերով.
2) 3-րդ մասը՝
ա. «ներդրումային ընկերությունը,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը,» բառերով,
բ. «ներդրումային ընկերության,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի,» բառերով.
3) 4-րդ մասը «ներդրումային ընկերության,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի,» բառերով:

Հոդված 10. Օրենքի 39.13-րդ հոդվածը «ներդրումային ընկերության,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի,» բառերով:

Հոդված 11. Օրենքի 39.14-րդ հոդվածը «ներդրումային ընկերության,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի,» բառերով:

Հոդված 12. Օրենքի 39.15-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը «ներդրումային ընկերությունը,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձը,» բառերով:

Հոդված 13. Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետը «ներդրումային ընկերությունների,» բառերից հետո լրացնել «կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց,» բառերով:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հանրապետության նախագահ **Վ. Խաչատուրյան**

2025 թ. հունիսի 23
Երևան
ՀՕ-172-Ն

Պաշտոնական հրապարակման օրը՝ 24 հունիսի 2025 թվական: